

18811

Нұржызы 7-ас
Сүергүз

891.99
4-17

Պերճ Տէր-Մատթէսսեան Հայկագունու

891.99

h-17

ԱՄՔԱՆԱԳ – ՓԱՄԲԱԿԱ

B-30
PPD

ՊԵՏԱԿԱՆ

Տպարան Ա. Դ. Ռոտինեանցի

Типогр. М. Д. Ротиніанца, на Гол. пр., д. № 41.

1893

Հրատ. Պերճ Տէր-Մատթէոսեան Հայկագունու

891.99

4-17 ԱՍՔԱՆԱԶ ՓԱՄԲԿԵՑԻ

4

6025

100
100

2003

Φ· Π· Σ· Λ· Β· Υ·

Տպարան Ա. Պ. Ռուբինեանցի

Типогр. М. Д. Ротиніанца, на Гол. пр., д. № 41.

1893

4338

ԻԻՐ ՄՐՑԱԿԻՑ

Дозволено ценз. Тифлисъ, 18 Марта 1893 г.

ՊԵՐԱՏ ՏԵՐ-ՄԱՏԹԵՈՍԵԱՆ ՀԱՅԿԱՁՈՒՆՈՒՆ

Երախտագիտական սրտով

ՆՈՏԵՐԱԿՈՒՄ Ե

Փալքակեցին

ՍԻՐԵԼԻ ՊԵՐՃ!

Ալսոր, որ ես ևս բաղդ եմ ունենում ձգելու
իմ աճնշան լուման մեր աղքատիկ գրականութեան
գանձատուփիը—բացառապէս պարտական եմ քս
խրախուսանքին և անխնակ աջակցութեանը:

Չունենալով մի ալ միջոց, որով կարողանափ
գէթ մասամբ հատուցանել քո արած լաւութիւներին
իրեն փոխարէնը, — ես ինձ վսեմ պարտք համարեցի
այս չնչին երկառող նուիրել քո անուան և խնդրել քեզ
և քեզ նմանների համար արեշատութիւն, օգտաւէտ
լինելու մարդկութեանը, հէնց իրենց քսան տարե-
կան հասակից, նպաստելով նրա մտաւոր զարգաց-
մանը:

Ընդունիր, Սիրելի ընկեր, նաև խորին ւար-
դանքս:

Բ. Առանող

ՈՎ ԿԱՐԴԱ-ՆԱ ՄԱՐԴ Ա

մաս շատ անուն անուն զնուդութեան պահանջման
ուժունութեան համարակալիք անուն
անունի ու անուն ու անուն:

I

Ո՞չ մի ձէն, ոչ մի ծպուռն չէր լսվում
և ոչ մի տեղ: Թէ սար ու ձոր, թէ ծառ ու
ծառաստան, հանդ ու մէրի լուռ ու մունջ էին:

Երկինքն էր, որ երբեմն-երբեմն խանգա-
րում էր գիշերային խաղաղ լռութիւնը:

Հ. գիւղի մթնդած, ամպամած փայ եր-
կինքը գոռում, գոռումով, զղբացնելով սար-
սափեցնում էր արար աշխարհը:

Մթնդած սև ու թուխ ամպերը գնում-
գալիս, իրար ճակատ-ճակատի էին զարկում,
ցըցուած անտառի ծառերին ահ ու գողի մէջ
գնում; մէկ էլ յանկարձ՝ «Ճրէ՛թ»-թէժ կրակի
նման բոց արձակում, նրանից յետոց էլ՝ սա-
սումի նման կարկատախառն անձրևը վեր ա-
ծում:

Զը կար երկրի վրա և ոչ մի վառ ձի-
թիայ ճրագ: Միայն Հ. գիւղի մօտիկ Վազանչի
ասուած մէրի միջից երբեմն-երբեմն մի քանի
տեղից վեր էին բարձրանում կրակի պէծեր
և մի բոպէից յետոց յաղթուելով, աէլաֆին
նման վազող անձրևից՝ կրկին վայր ընկնում:

Կիսամարած կրակը տեղ-տեղ այրվելով՝
բարձրացնում էր թանձր ծուխ և աւելի
ահռելի կերպարանք տալիս բնութեան, այն էլ
աննկարագրելի մթնդած տեսքին:

Կէնա ու Գուրգէնն ու Գագիկն էին,
որնք իրենց շուրջը հաւաքած «արոճանող»
Զատկին, Արաբին, Նեզօին և մի քանի էլ
հորթեր՝ տմսկուած նստել էին, կապերտները
գլխներին քցած:

Նրանցից մի քիչ հեռու նստած օռնում
ու վնդստում էին նրանց հաւատարիմ Ղափ-
լոն ու թոփուշը:

— Է՛հ, ես բանը՝ բան չի,—ասաց Գուր-
գէնը՝ սաղ ջանով սուրթոցնեմ ընկել; Սա էլ
մի կեանք չի.—առաւոտւանից մինչի իրիկնա-
պահ էրուիր, փթոթուիր, արին քրտինք թա-
փիր, հիմի էլ սաղ գիշերը դողա ու սառի:
Գագիկ, դու մնց ես, դարձաւ նա դէպի ըն-
կերը, — ես որ փէտացել եմ, քիչ է մնում, որ
ատամներս տեղահան ըլեն...

— Աստուած ինքն էս սե օրերից ազատ
անէ, ոնց պէտք է ըլեմ, ոտներիս մատները
ձեռից դուրս էկան: Աստծու դատաստանը քաղցր
ըլի, բաւրի ինքն ողորմի, մեր հերերի սիրտն
դութ քցի, որ մենք էլ նրա նման ազա-
տուենք, պլծնենք, հոդիքներս ազատ անենք

էս դժոխսքից, էսպիսի սե ու դառն օրերից:
— Գուրգէն, էն ինչ ձէն ա, նա մար-
դու չի...

— Այ դու, վախկոտ, ինչ ձէն պէտք է
ըլի, որտեղ ենք որ...

— Զէ, չէ, քը՛ս տուր շներին, ես վախե-
նում եմ... չը՛լի թէ սատա...

— Կորիր, ռաղ ըլի գլխիցս, հլա աման-
չում էլ չի... «վախենում եմ, ինչից ես վա-
խենում», ինչ վախենալու բան կայ: Բա հա-
րամ չէր էն ուսումը, որ տուեց վարժապետը:
Դու բա չը կարգացիր, որ աշխարհիս երեսին
ոչ սատանայ կայ, ոչ գե, ոչ էլ քաւթառքսի:
Սատանէքն հէնց իրենք չար մարդիկն են, ու
մէկ էլ քեզ նման վախկոտները: Բա միտքդ չի,
որ վարժապետը մի օր սաղ օրը դրա վրին
խօսեց, թէ մեղաւորութիւնը մեր մէրերին ա,
որ ըտէնց բաներին մենք հաւատում ենք, որ
իրէնց չը հասկանալովը, մեզ վախեցնելու հա-
մար, ինչ ա թէ մեր ձէները կտրեն, — ասում
են. — ես հրէսի քաւթառքսին կը գայ կը լափի,
եա՛ այ գել, դու արի սրան տար... բա էլ
էն ուսումը որ օրուայ համար տուեց վարժա-
պետը, որ ըտէնց բաների էլի հաւատաք:
«Վախենում եմ, այ դու, վախկոտ մուկի:
Մենք կէնտու կարող ենք վախենալ Աստծուց,

մեր ծնօղներից, մեր վարժապետներից, մի խօսքով՝ մեր մեծերից։ Են էլ զիտես մնց. հօ նրանք մեզ սպանելու չեն, — չէ. Էնա որ Աստծու օրէնքները միշտ մոքումդ պահես, մարդու նը հաղ տեղը փսութիւն չ'անես, ընկերիդ վնաս չը տաս, չը նախանձուես նրա ունեցածին, ծնօղիդ և վարժապետիդ տուած խրատները սրբի պէս պաշտես, քանի որ նրանք, թէկուզ ինչ որ և ըլի՛ քո վատը չեն ուզի։ Տօ, դու որ ուսում ես առել ու ըտէնց վախւլուկ մուկ ես, բա՛ քո պուճուր աղպէրտինքը ոնց կը լին։ Ամօթ է, ամօթ, էլ ըտէնց բաներ չ'ասես, թէ չէ երբ աշոնքը, բարով խէրով մեր վարժապետը էլի գայ—կ'ասեմ, որ Գագիկը սաստանէքին էլի հաւատում ա։

— Փահ, փահ, փահ, դու ինչ մոքով ես ըլել տօ... Ո՞վ ասեց թէ...։

— Կարի՞ր ձէնդ, վարժապետը չ'ասեց, որ մենք պէտք է մեր տնեցոնց խրատենք, ասենք, որ դժանք սուա բաներ են, սաստենք մեր քվորտանցը ու մեր մէրերին, որ էլ ըտէնց բաներով չը վախեցնեն, մուր մնաց, թէ մենք էղպէս բաների հաւատանք, ու մի բան էլ աւել՝ վախենանք։ Ամօթա, էլ ըտէնց բաներ ուղիշի մօտ չ'ասես, թէ չէ վրիդ կը ծիծաղմն, մասխարաց կը քցին։ Մէկ էլ որ էղպէս բաներ

եմ լսել—սաղ ընկերներիդ մէջ խայտառակ կ'անեմ, ու մի լսւ էլ կը գնդզեմ։ Թէ որ էդ խելքիդ մնաս, Աստուած որ աչողի, քաղաք գնանք՝ մեծ ուսում ստանալու, մարդ դառնալու, ոնց որ տէրտէրի տղէլքն են ես էլ քեզ հետ ընկեր չեմ դառնա։

— Հա, հա, հա,—ծիծաղեց Գագիկը, համա ամօթից։—տօ, ինչ թէզ բանի հաւատացող ես։ Ես քեզ էի փորձում։ Էզ ոնց ա որ դու վարժապետի ասածները ըտէնց սրբի պէս մոքումդ ես պահում, որ ես չը պահեմ։ Ես ուզեցայ իմանալ, թէ հօ դու չես վախենում։ Կ'ասես թէ էս առաջին անգամն ա որ ես ըստել եմ մնում, էնքան եմ մնացել մէն - մ են ակ, կէնտու քնել, որ հաշիւ էլ չը կայ։ Իմ Ղափլօն սաղ ըլի՛ էղպէս բաներից չեմ վախեցել, ու չեմ էլ վախենայ։ Համա, թէ որ բան ա, գէլ-մէլ ուստ գայ՝ էն վախան էլ Ղափլօս սաղ ըլի, ինձ իմաց կը տայ։

— Ե՞ն, վրա բերեց Գուրգէնը, մարդ թէ որ պարզ երես ըլի՛ Աստծու, իր ծնօղների, իր մեծերի, իր վարժապետի մօտ—հաւատացիր, որ ոչ դէլ կարաց մօտենա, ոչ էլ ջանաւար...

Դէ՛, լաւ, լաւ, քնենք, ասաց Գագիկը, համա մի բան ասեմ չը ծիծաղես վրիս. բան ա, թէ որ գնացինք Թիֆլիս ուսում առնելու,

Աստծով էլ որ ուսումներս առանք ու պրծանք,
ի՞նչ միտք ունես ըլել...

—Գլխիցդ մի դուրս տալ: Ձես լսել, որ
ասում են. «Չուրը չը տեսած — մարդ չի բոբ-
կանա». դուն, քունս տանում ա, քնենք, տես-
նենք էքուց Աստուած ինչ կը տայ:

II

—Բա ես պէսք է ըսէնց մնամ էլի...
միր Աստուած վեր կունի, որ իմ ընկերները
գնան քաղաք մարդ դառնան, ես չի: Ի՞նչ է,
ի՞նչ իմ մեզքը: Ի՞նչ անեմ՝ թէ աղպէրախնքս
պուճուր են: Այ, մէրա ջան, դու էլ ա իսավ
ունեցիր է, դու էլա ամնիս ասա, որ աղպէր,
ես բան չեմ ուզում ձեր ունեցածից, թաքի
ինձ ընկերներիս շարքից եդ չը քցէք: Հրէն
Աթու—Քեօխվանք էլ շատ հարուստ են, համա
օգուտը թնչ, որ նրանց տղէրքն էլ ուրիշների
պէս տրեխներով են ման գալի, հլա շատ վախտ
էլ բորբէկ: Մթամ, ոչ բարով էս զեղի ամենա-
հարուստ տունն են, համա նրանց տղէրքն ու
աղջկէրքը հազար անգամ աւելի են տանջ-
վում, քան՝ էն աղքատ Մարաքի Մխօյի «Ճընգ-
լամուտերը»: Նրանք էլ են պոկան անում,
նրանք էլ, նրանք էլ են արեի երեսին դադ-
վում, խորովում, չնզի քարերը դուրս թա-

փում, նրանք էլ: Ել ինչիս է պէտք էդպէս
հարստութիւնը: Նատ էլ ամիս շատ հարուստ
ա, հօ ես դրանով մարդ չեմ դառնաց: Ո՞վ ա
կէնտու փողի երեսին մտիկ տւած, ծլապատիկ
նստած մարդ դառել, որ ես դառնամ: Հրէնի
հա, աչքներիս առաջ են տէրտէրանք, նրանք
հօ մեզանից շատ ու շատ պակասաւոր են,
համա նրա տղէրքը կալօշ սապօկ են հագնում,
նրանց աղա են ասում, գլուխ վեր բերում,
համա ես տրեխներով եմ ման գալի, շատ
վախտ էլ՝ ոտնաբորիկ էնքան եմ ման գալի,
որ ոտներիս կաշին քրքրվում ա ու արինը
շուալէն թափում: Փառք Աստծու, ամնիս էլ,
հօ մի մարդ էլ չը կայ, որ մարդու տեղ դնի, մի
հէչ չի գլուխ վեր բերի: Էլ հիմի մարդ փողով չի
մարդ դառնում, մէն-մէնակ ուսումն ա, որ մար-
դիս թամամ մարդա դարձնում: Էլ ինչիս է
պէտք էդ հարստութիւնը, քանի որ ես էլ
մեծանամ, նրանց շարքից չը պէտք է հեռա-
նամ: Լսել ես, մէրա ջան, որ ասում են.
«Ի՞նչիս ա պէտք ոսկէ լազանը, քանի որ նրա
մէջը արին եմ թքելու»: Հիմի էդ ձեր հարս-
տութիւն ա: Բա իմ վարժապետը գիտ
էր, որ տարին տասներկու ամիս խրատում էր,
թէ էդ ձեր հէրերի հարստութիւնը ոչինչ ա,
թէ որ չը գնաք ուսում առնելու:

— Նատ լաւ ես ասում, Գուրգէն ջան,
ասեց նրա մէրը.—լաւ, քեզ տուինք ուսումի,
գնացիր քաղաք, հօ մենակ դու չէս, չՔ որ
քեղանից սաֆայի երկու աղպէր էլ ունես:
Ախր նրանք որ մեծանան, նրանց ի՞նչ անենք:
Ախր հօ երկուսի հացը կտրելու չէնք, թէ ինչ
ա՝ մինը կշտանա...

— Տօ, ջանս, ինչի էք կտրում, փառք
Ասոծու, հա էնքան կայ, որ ինձ էլ, նրանց
էլ հերիքա: Ասոտուած թողէն օրին արժանացնի,
էն վախուլ թող էս իմ ջիւան ջանէլ ջանս
դուրս գայ, ես գիշեր—ցերէկ կանեմ, Տիգրանիու
ու Արմենիս ինձանից լաւ մարդ կը դարձնեմ...

— Այ բալա ջան, կէնտու բանը հօ փողի
գլխին չի. էս քրքրուած ջանս հալ ու մաշ եւ՛
արել, աչքերիս լիսը քոռացրել, մինչև որ քեզ
էդ օրին եմ հասցրել, բօյիս բարեբար արել:
Ախր, սրտիս վարդ, աչքերիս զարդ, էդ բօյիդ
ու բուսաթիկ մատաղ, ո՞նց թողնեմ, ուրիշի
ձեռք քցեմ, շան ու գէլի փայ անեմ: Մի որ
որ քեզ չը տեսնեմ, էն օրը ինձ համար՝ օր չի,
ու ու վարամ ա...

— Լաւ, մէրա ջան, մի կէս սըհաթ ասենք
որ՝ չը հետանամ ձեր մօտից, ուրիշների տղե-
րանց պէս ես էլ անասուն դառնամ: Իս ինչի
էն օրը, որ տեսար տէրտէրի տղէրանց ընէնց

ման գալով, գեղի իշխանները գլխները բաց
արած, ետևներից ընկած, (ասենք որ, երբ ես
նրանց պէս ուսումն աւարտեմ, չեմ թողնիլ,
որ գեղացիք էդպէս բան անեն, իմ առաջս
գլխաբաց կանգնեն), մի խոր հօգոց քաշեցիր
ու ասեցիր. «Երանի քու հօրն ու մօր» աչքի
լիին, երնակ ձեր թաբունին»: Զէ որ կը լի
ժամանակ, որ ուրիշներն էլ քու տղի հօրն ու
մօրն էրնակ տան...

Խեղճ մայրը էլ չը կարացաւ իր մոքինը
պահել, ախ ու վախ քաշեց, մօտեցաւ իր սի-
րելի որդուն, բռնեց նրա գլուխը, արտասուն-
քով լուաց, վառուած սիրով իր կրծքին սեղ-
մեց, հարիր անգամ համբուրեց, ու զօռ-զօռն-
դա ասեց. «Երէկ իրիկնապահին Տէր Աւետիս հայ-
րը ու վարժապետդ ամսիդ մօտ էին, նրանք հօրդ
իրենց խելքին բերին, ամիդ էլ խօսք տուեց,
որ քեզ քու. թացդաշներից եղ չը քցի, որ դու
էլ կիրակի օրը, — ախ սիրուն բալիկ ջան, Մայր
Աստուածածինը քեզ հետ, — զու էլ նրանց հետ
ճանփայ ընկնես: Դէհ, գնա, էքուց ում ու-
նես-չունես՝ տես, ամենքի հետ էլ մնաս բարով
արա, մեծ քորդ ու փեսիդ էլ կանչի, ասա
թող էքուց իրիգնապահին դան, որ գիշերը
ճանփիդ թաղարէքը տեսնենք»:

Գուրգէնը ուրախութիւնից էլ չիմացաւ

թէ ինչ անի և խլպլտան ձկան պէս դուրս
պըծնելով մօր զրդից՝ ափալ-թափալ դուրս
վաղեց:

III

Արևի թէժացած ճառագայթները, կար-
ծես մախսուս ուժովացրել էին իրենց դաղող
զօրութիւնը, և ընկնելով բարձր շամու, լօ-
րենու, գերմագտենու, աճարենու,
հացի, թըլսկի, բոխի, կաղնի, սօսի,
բարդու, եղենու, տանձենու, խնձո-
րենու, ֆօնի, գիլազէնի, մամխի, կե-
չի, մասրի, ճօղօպրի, չինարի, ըզվա-
խի ծառերի կատարներին, արին քրտինք էին
թափել տալիս էն ճամփօրդներին, որոնք անց-
նում էին նրանց տերեւոտ ճղների տակով:
Գետնից բարձրացող բուզը աւելի ու աւելի
էր նեղացնում ոտքով գնացող էն մի քանի
մատղաշ ջահէլ-ջուհուլներին, որոնք առաջին
անգամն էին հանդիպում էիպիս շոք հավային
(եղանակ):

— Գուրգէն, դարձաւ ընկերը դէպի նա, —
հայ, «արմն», արմն», որ ասում էին, էսա էլի:
Դրուստ որ ճաշի էն թունդ վախտը ձուն կէ-
փուի աւագի մէջ: Միտդ է, որ մեր վարժա-
պետը սովորեցրեց մեզ:

Նրանք մի քիչ առաջ գնալով՝ մէկ էլ լսե-
ցին զարհուրելի ճըղոցներ, արըխ-չըլքսկոց-
ներ, դրը՛դ-դրընդոցներ:

— Աստուած իմ, էս ինչ բաներ են, էս
ինչ թաւուր սարսափելի ձէներ են, ասաց Վա-
զօն, — բա ինչի էս թաւուր բաներ մենք մի
օրեց-մի օր մեր Ղազանչվումը չը տեսանք,
չը լսեցինք:

— Այ քեզ անխելք մարդ. նրա համար,
որ մեր Ղազանչուն մէրի ա, հօ էսպէս մենձ
մէշա չի:

— Համա, ոնց որ տեսնում եմ, ասեց
Սուրէնը, — դու շատ քօռիզան տղայ ես, Վազօն,
էրեսիդ ասելու չ'ըլի: Ասա ինչի: նրա համար,
որ մենք սովորած ենք, որ էս թաւուր մեծ
մէշեքանցում ինչ տեսակ վիրունի կենդանի-
ներ ասես, որ չ'ըլեն. ջէցրան, մարալ,
կխտար, աղուէս, ալափստրակ, (նա-
պաստակ) խոզ, էծ, արջ, գէլ, շաղալ,
քօռքու, դրլօն, կաքաւ, վիրունի
հաւ, ղազ, օրդակ, հնդուչկա, ղրզօ-
ուլ, ֆազան, լօր, մշահաւ, կոլունկ,
ձկնկուլ, բլբուլ, ժէռ, թառլան,
դզլդուշ, զըզդուն, ուրուր, հօտազ-
խափուկ, ես ինչ զիտեմ, հազար ու մի
թաւուր բան: Լսում ես, որ թրը՛խկ, թրը՛խ-

կացնում ա, հէնց կասես թէ կացնով եքա
ծառը տաշում ա: ինա է, մեր սովորած ծա-
ռակուտկանը (կտօցահար): Տօ, դրուստ որ մարդ
ընէնց ա իմանում, թէ ամէն մի ծառի տա-
կին մի մարդ ա նստած ու մի թաւուր ձէն ա
ածում: Խշոց, շվոց, թրբխմբխկոց, ջարդ
ու փշրոց...

— էս հիմի որ էսպէս ա, բա ոնց կըլի
քամու էն թունդ վախուր, մէջ լընկաւ
Վարդանը:

— Թամամ ջարդոց, տրաքոց, վզոց, Առ
տուած եղի, հեռու տանի, զուշմանիս ար-
ժանի չ'անի:


— է՛ն, ինչ որ էլ չ'ըլի, մարդու որչի
կարալ մի մատաչափ վասիլ, թէ որ նա չը վա-
խենայ ու միտքը չը բերի հազար ու մի փուչ
բաներ, ինչ որ պուճուր վախուր ասել են նրան
վախեցնելու համար:

— Բալէք ջան, ձէն առւեց Գագիկի
հէրը, — ինչի՞ էք յետ լնկել, թէզ էկէք, հա-
սէք, ճանփէքս ծռմնվում ա, մեզ կը կորցնէք,
մարդ էլ չ'ըլի, որ ձեր հաւարին հասնի:

IV

Սրանք հասնելով Թիֆլիզ, արդէն ըն-
դունուել էին ուսումնարան և, մնաս բարովից

առաջ, Տէր հայրը նրանց հետեւեալը խրատեց:
— է՛ն, փառք Արարէին, ասեց Տէր
Աւեախս հայրը. — դուք, բալէք ջան, ձեր մու-
րազին հասաք ձեր հայր գտաք, ձեր հէրերը
պրծան իրենց ծնօղական պարտքից: Նրանք
կը վաստակեն, արին քրտինք կը թափեն, ոնց
որ ծնուել են, ընէնց էլ կը մեռնեն, թաքի
դուք մարդ դառնաք, Ասոծու, մարդու մօտ էլ
պարզ երես լուրս դաք: Նրանք իրենց օրեր-
ները չոր ու ցամաք հացով կ'անցնեն, ձեզ իր
ժամանակին փող կը հասցնեն, թաքլի դուք
դուշմանի սրտով չ'ըլէք, նրանց էլ, ձեզ էլ
խայտառակ չ'անէք: Զեր վարժապետները,
վերակացուքը, ինչ որ ասեն՝ լսեցէք, կատա-
րեցէք, գասերներդ միշտ լաւ սերաեցէք, որ
նրանք ձեզ սիրեն: Վայըն էկաւ տարաւ ձեզ,
թէ որ գասերներդ չը սովորեցիք, վատ-վատ
տղաների հետ լնկերացաք, նրանց ասածովը
գնացիք. էն ժամանակ ոչ մարդ մտիկ կը տաջ
ձեր երեսին, ոչ էլ՝ Ասոծուած: Դուք ամէն օր,
ամէն զիշեր պէտք է մտածէք, որ հարիւրա-
տը վերատեր հեռու եք թողել ձեր հօրն ու
մօրը, որոնք զիշեր-ցերէկ ձեր անունը պէտք է.
տան, Ասոծուն ինդրին, աղօթք մնան, որ ԿՈՂԱՐՍ
դուք սաղ-սալամաթ պրծնէք, գաք ձեր ազգին, անունը
էկեղեցուն ու հայրենիքին, պիտանի անդամ



դառնաք։ Գաք ուրախացնէք ձեր ծնօղներին, բարեկամներին, հարեւաններին։ Նրանով որ՝ նրանց տղերանցն ու աղջկէրանցն ուսումնաք, նրանք էլ ձեզ պէս մարդ դառնան... Չասէք թէ ձեր հերերը հարուստ են, — չէ. ովէ տուել խեղճ գեղացուն փող։ Գեղական աղաթն ալուն դավաց շինել... Մի երկու սուրու ոչխար ունենալ՝ էդ հարսութիւն չի։ Շատ էլ ասենք ունեն, համա փողը որ կայ ձեռի կեղտի նման մի բան ա, ըսօր կայ, էքուց որ կայ լուանաս՝ էլ չը կայ... Զախորդութիւնը որ կայ սելափի նման մի բան ա, կը գայ, կը սրբի ու կը տանի։ Համա ուսումն էնտեսակ բան ա, թէ որ մարդս խոնեմութիւն, հնազանդութիւն ունենայ, զըլիսաւորապէս համբերութիւն՝ իր ուսման դասընթացը աւարտի, էն ժամանակ թօփն նրան քեար էլ չի անիլ։ Բողորդ էլ մի հողի, մի ջրի որդի էք, իրար հարեւան, սիրով կացէք, սիրով ապրեցէք, իրար դասերում օդնեցէք։ Հէնց ասենք որ մի նրկրից էլ չէք — էլի դարձեալ իրար եղբայր էք, մի աւազանում մկրտուած էք, հայ անունը ճակատներիդ վրա դրոշմած էք։ Ձէ թէ մէն-մէնակ նրան պէտք է օդնէք, այլ և նրանց, ովքեր ձեզ հետ մի աւազանից չեն, հայ չեն, քրիստոնէայ չեն։ Ձեզ օրինակ թուրքն ու քուրդը։ Նրանք էլ ձեր հարեւան-

ներն են։ Ուսումն էն տեսակ բան ա, որ ջոկողութիւն չի դնում մարդկանց մէջ, թաքլի նա մարդ գ ըլլի...»

— Փառոց կէնաս, տէրտէր ջան, — ընդմիջեց վազօի հայրը. — Խի՞ ես էդ ասըմ. հրէն մեր Սօսի աղէն, — տես թէ մնց ա Մահմադ Ղուլի աղի հետ. մի մօրից ըլածները, մի ծիծ ծըծածներն էլ էնպէս սիրով չեն, ոնց որ նրանք են։ Դէհ, համա տես էն մէկէլ-մէկսեներին, կասես թէ մենք նրանց ազիզ որդուն դիմաղիմա ենք արել, որ քիչ է մնում թէ մեր վերջին արինն էլ ծըծեն, խմեն...

— Սաքօ ամի, — ասեց Տէր Աւետիս հայրը, — նրանց մեղ դնիլ չի կարելի, որովհետեւ վայրենու նման են մեծացել, նրանց ի մամն երը էդպէս են պատուիրել, մեղ «գեավուր» են ասել։ Համա մենք էլի, մարդ դէյին՝ պէտք է նրանց հետ նստենք, բարեկամութիւն անենք, հասկացնենք, որ...

— Լաւ ես ասում, տէրտէր ջան, համա ինչ արած, — մեր վախոնն անց է կացել, մենք պառաւել ենք, թող քո սուրբ օրշնութիւնը սրանց զլիսիցը անպակաս ըլլի, որ սրանք էլ քու տղերանց պէս մարդ դառնան, գան էդ բաները նրանք անեն... Աստուած ողորմած ա, հլբաթ օր-օրի, տարին-տարուայ վրա էսպէս-

Ները կը շատանան, կը գան, նրանք նրանց
կը հասկացնեն, թէ մենք իրար հաշտ աչքով
պէտք է մոխիկ տանք, սիրով առլրենք, նեղ օրե-
րում մինս—միս հասնենք, քեօմակ անենք,
մինչև անքամ, թէ բանը արին թափելու էլ
հասնի—մէկս-մէկի ուղուրին իր ջանը չը ինայի:
Տէր հայր ջան, մէկ էլ օրշնիր...

—Աստուած ինքն օրշնի: Օրշնուած կը լինին
էն ժամանակ, երբ աշխատասեր կը լինեն,
պարկեշտ ու հնազանդ, իսկ թէ չէ օրշնեմ:
չ'օրշնեմ՝ Աստուած չի էլ ընդունի, ու աւ երես
կը մնան թէ Տարդկանց մօտ, թէ Աստծու դա-
դաստանի առաջ:

V

Չորս տարի էր անցել էն օրից, երբ որ Գոս-
դեկի, Գուրգէնի, Տիգրանի, Վարդանի և Վաղօի
Տէրերը օրշնելով իրենց որդիկերանցը, աչքերն ար-
տասունքով լցուած՝ թողին ու գնացին, ահա էդ
օրուանից չորս տարի անց՝ Թիֆլիզի միջին փո-
դոցի սենեակներից մնում լսվում էր զալմաղալ,
գուսում, գոչում, անորոշ ձէներ, որոնք որ
իրենք էլ չը գիտէին թէ ինչ բանի վրա են և
ինչ էին ուղում անել...

Նրանց ընկերներից մինը՝ Կարօ անունով,
ընկել էր քուչա-քուչա, տունէ-տուն, իրար

գլխի էր հաւաքում, որպէս խորամանկ, աղո-
տող օձ, նրանց տամարը մոտած՝ նրանց ուղիղ
ճամփից դուրս էր հանում, իրենց սիրելի վար-
ժապետների դէմ՝ թշնամացնում, նրանց ուշքն
ու միտքը պղտորում...

—Եղբայր, — ասում էր Աարգիսը, այսպէս
չը լինի. Թողնել այսպէս, ինչպէս իրենք են
ցանկանում անել—այդպէս չի կարելի: Ինչու
մէկին աւելի թուանշան է նշանակուած, միւ-
սին՝ չէ: Դէհ, հօ, այդպէս չը լինի:

—Աարգիս, ինչ ես ասում, մի լաւ միտք
արա: Ով կուզի, որ իր աչքը քօռ աեսնի.
մի թէ վարժապետը կը ցանկանայ, որ նրա
աշակերտները ծով լինին, առաջադէմ չը լինեն:
Ա'իր, այ եղբայր, մեր այս վարմունքը՝ վար-
ժունք չի. մի ինքներս էլ մտածենք մեր արած-
ների վրա: Ինչ կ'ուզէք, ասացէք, ես չեմ կա-
րող հաշտուել այն մոքի հետ, որ վարժապետը
մի որ և է աշակերտի հետ թշնամութիւն ու-
նենաց: Ա'իր, մէջ տեղը ինչ կարող է լինել,
որ վարժապետը ուղենայ եա քեզ, եա ինձ,
եա թէ չէ սրան-նրան վնաս է: Սուտ բան է:
ձշմարիտ է ացն, որ ուսուցիչը կը սիրէ նրան,
որը լաւ է սովորում դասերը, իսկ կ'ատէ նրան,
ով որ օրերն անցնում է փուչ ու գատարկ բա-
ներով: Եթէ մենք իոզնով դատենք՝ կը տեսնենք,

որ մեղաւորը հէնց մենք ինքներս ենք։ Ահա
թէ ինչու. մեզ պատուիրում են թատրոն
չը գնաւ ի հարկէ, թէ ինչ է պատճառը՝ դրան
մեր խելքը չի համառմ, բայց պէտք է լաւ
զիտենանք, որ մեր օգտի համար են այդ ա-
նում, չէ, մենք չենք կատարում նրանց պա-
տուէրները, ամբողջ տարուայ դասերի մեծ
մասին չինք ներկայ գտնվում, շատերն էլ
դիտմամբ հիւանդանում էին, շատերն էլ իրենց
քէն ուզածի պէս, ուր որ ուզում՝ զնում
էին... Ամբողջ տարին ասելով, խրատելով, հո-
գիքները դուրս էկաւ, այժմ, որ արդարու-
թեամբ մեզ պատճում են՝ ուզում ենք որ
ապօրինի կերպով մեզ տեղափոխեն յաջորդ
դասատունը։ Ինչ և՛ լինի, ինչ և ուզէք անել—
ես չեմ կարող խղձիս հակառակ գործել։ Ան-
ուանեցէք ինձ ցածրահորի, կեղտու, անազ-
նիւ—չէ, ես չեմ համաձայնուի ձեզ հետ և
մասնակցել ձեր աններելի վարմունքին և կ'աշ-
խատեմ իմ ուժերիս չափ՝ համոզել նաև իմ
ընկերներիս, եթէ ոչ ուրիշներին, զոնէ իմ
երկրացիներին։ Խորովութիւն յարուցանել ու-
սումնարանի վարչութեան դէմ—դա միւնոյնն
է զործել հակառակ Աստուածային և մարդ-
կային օրէնքների։ Դուցէ և հէնց իրենք վար-
ժապետներն են մեղաւոր, այդ մեր գործը չէ,

այն ժամանակ իրենք են պատասխանատու։
Եւ զարմանալին այն է, որ լսու մեծի մասին
խորովութիւն յարուցանողները նրանք են, ով-
քեր շրջմոլիկի պէս օրերը դատարկութեամբ
և խաբէութեամբ են անցըել...

—Ո՛չ, ոչ, ես երբ ազատուեցայ այն դառն
ու մե օրերից—այդ չը խոստացայ իմ ծնօղ-
ներիս։ Ենթադրենք որ, հէնց վեր կացանք,
գլուխ-գլխի տուինք, հարայ-հրոցը դրինք—ախր
դրանից ինչ օգուտ։ Կը վերցնեն ու կը վանդեն,
ձեռներիս ինչ ճար կայ...

—Եղբայր, ասաց Վարդանը, ես բոլորո-
վին համաձայն եմ Գուրգէնի հետ և լիովին...

—Հա, հա, հա, ծաղրեց նրա համազիւզացի
Գագիկը։ Պու էլ խելօքներից մինն ես։ Ի՞նչ-
պէս կարող ես համաձայնուել միկի հետ, երբ
ընդհանուրը տրամադրի է կատարել տալու իր
արդարացի բողոքը և դուք երկուսդ...

—Ո՛չ, ոչ, տուին շատերն, —երկուս
չեն, և մի քանի հոգի էլ անցան Գուրգէնի և
Վարդանի կողմը...

—Ուրեմն, ես այսօրուանից, ասաց Գա-
գիկը, —Գուրգէն և Վարդան, խզում եմ իմ
ընկերական, բարեկամական կապերը ձեզ հետ
և շատերի հետ համաձայնվում եմ այն կար-
ծիքին, որ դուք արժանի չեք ընկերական

կոչումին, որ դուք զաւաճան, կեղտոս աղաներ էք, և ափսոսում եմ, որ մինչեւ օրս ձեզ լաւ չեմ ճանաչած...

—Գագիկ, դառն կերպով ժպտաց և ասաց Գուրգէնը. —մի լաւ մտածիր ասածներիդ վրա, թէ այդ լինչ ես դուրս տալիս գլխիցդ: Միթէ չէ պատահած, որ ընդհանուրը սխալվում է, կուրօրէն հետեւում է մշկին, որպէս ամբողջ հօտ՝ Սէցիզին: Իմ կարծիքով, եթէ հէնց հաստատօրէն պնդենք, համոզուենք, որ իրենք ուսուցիչներն են մեղաւոր, բայց ոչ մի օգուտի չենք կարող ենք հասնել, այլ լաւ է, որ խոհեմութեամբ վարուենք, սակասենք, կատարելագործուինք, աւարաենք և այն ժամանակ աւելի հասունութեամբ կ'որոշենք՝ թէ ումն է մեղաւորութիւնը և ով արժանի կը լինի դատապարտուելու... թէ չէ կը վերցնեն, դուրս կանեն, որպէս շատերի հետ են վարուել և մեղ էլ կը զրկեն մեր յոյսերից, մեր ծնօղների սպասելիքներից և այն ժամանակ կը փշանաց մեր ամբողջ ապագան, իսկ իրքւ ոլխանի անդամ ազգի և մարդկութեան համար մենք չենք կարող դառնալ և մի մազաչափ օգուտ հասցնել նրանց...

—Սանր արարած, գլուխը թափ տալով ասեց Գագիկը. —Գուրգէն, համոզուեցաց, հա-

մոզուեցաց, որ դու հացկատակ տղայ ես, որ դու ծառայում ես միմիայն քո փորի համար, քո ծնօղների և քո ապագայի բարւոքման համար, այլ ոչ թէ ընդհանրութեան...

—Զայնդ կարի՞ր, —դադարկագլուխ, ինչ, կարծում ես թէ այդ ձեր ձեռնարկութիւնն այնքան մի մեծ նշանաւոր գործ է, որ նա պատկանում է ընդհանուրի շահերին և մենք պէտք է զոհինք մեզ նրան: Եթէ լինի այնպիսի մի վսեմ գործ, որով ընդհանրութիւնը օգտուի՝ հաւատացիր, որ ձեզ նմաններն երեան էլ չեն դուրս գալ: Այսքանը դու դեռ չես հասկացել, որ մի մարդ, երբ ցանկանում է օգուտ բերել հասարակութեանը—նա պէտք է անկախ և ապահով դրութիւն ունենայ, որպէսզի հնարաւորութիւն ունենայ նրան շահեցնելու: Իսկ երբ նա ինչն է կարօտ օգնութեան—ոչ մի ժամանակ նա չի կարող օգուտ տալ ընդհանուրին: Ուզում ես, նստենք ամբողջ ամիսներով, լաւ-լաւ ծրագիրներ կազմենք օգուտ մեր ազգի և հայրենիքի, ծրագրներ, որոնց ոչ մի մարդ չի կարող երեակայել, և եթէ սոված ենք, մենք ինքներս ենք կարօտ օգնութեան—մեր մոտածմունքը կը մնայ լոկ մաածմունք և մեր խօսքին ոչ ոք չի էլ լսիլ, մեզ մարդու տեղ չեն էլ դնիլ...

— Գագիկ, լաւ մոածիր ասածներիս վրա
և կը ցիշես մի օր այս իմ խօսքերն և
կը փոշմանես ու դվիխիդ վայ տարով՝ կ'ասես,
ամս երանի թէ ես լսած լինէի Գուրգէնի և
Վարդանի ընկերական անկեղծ խորհրդաւու:
Դէ՞ս, Գուրգէն ջան, գնանք դուրս, իսկ սրանք
ինչ որ ուզում են՝ թող մեր ետեից ասեն,
թէկուզ մեզ սպանեն, իսկ Գագիկը թող մեզ
նման «կեղաստոների» հետ կապերը խղէ...
Նրանք դուրս գնացին:

VII

— Օրիորդ Գոհարիկ, զարմանում եմ, թէ
ինչպէս և ձեր բոլորիդ մաքերն այդպէս շուտ
շփոթուեցան, և դուք էլ հաշիւ չը տալով ինք-
ներդ ձեզ՝ կուրօրէն հպատակուեցիք այդ չա-
րամիտների ձգտումներին... Սակայն ամենից
աւելի զարմանալին է այն, որ դու էլ և քեզ
հետ էլ մի քանիսը բարեհաճել են այն մինչնոյն
կարծիքն յայտնել Վարդանի, իմ և մեզ հետ
համախոների վերաբերմամբ, որ...

— Սխալվում ես, եղբայր, — ասեց Առափիկը,
ես և Պերճանոյշն նոյն մոքերն ենք սլաշտա-
նում, որ այդտեղ չը կայ և ոչ մի ընդհանուր
գործ: Նրանց միտքը պարզ է. որպէս զի հաս-
նեն իրենց անմիտ դիտաւորութեանը՝ ուղում

են գողանալ և մեր խելքն, որպէս գողացան
շատերինը, — թշնամացնելու այն միևնոյն ու-
սուցիչների գէմ, որոնք դասեր ունին թէ ձե-
զանում և թէ մեզանում:

— Ա'նը, ես չեմ հասկանում, ասում էր
Պերճանոյշն, ինչ հիմունքներ կան, ինչ փաս-
տեր ունինք մեր ձեռքերում, որ մենք էլ բո-
ղոքենք նրանց այս ինչ, այն ինչ արարմունքների
գէմ...

— Պերճանոյշ, Պերճանոյշ, վրա բերեց
Նազիկը, — համոզվենք քեզ և քո ընկեր-
ներիդ հետ, որ ոչ մինը ուսուցիչներից մեղա-
ւոր չէ, բայց գիտէք, որ դժանով կ'արդարաց-
նենք այն դարեւոր ասացուածքն, որ ասել են
մեր նախորդները. «Հայը անմիաբան է»: Նոյն
իսկ, եթէ գիտենանք, որ մեզ էլ կը զրկեն,
կը փշացնեն մեր բոլորիս ապագան — պէտք է
զոհուինք ընդհանրութեան...

— Ո՛չ, օրիորդ, նախ՝ դու էլ իմ ընկե-
րուհիս ես և երկրորդ՝ ես այնքան թեթեա-
միտ չեմ, երբ չեմ նկատում գործի մէջ ոչ
մի նշոց, որը վերաբրուէր ընդհանուրի շահե-
րին, որին մեղք է, նոյն իսկ, ընդհանուր օգուտ,
շահ անուանել ես զոհէի ինձ նրան, նամանա-
ւանդ քաջ գիտենալով, որ այդ իմ վարմունքով
ես աւելի վնասած կը լինեմ թէ մասնաւորին և

թէ՝ ընդանուրին; Կը վեսաեմ մամնաւորին, որովհետև կը զրկեմ նախ ինձ, կը ծանրաբեռնուեմ իմ ծնօղների վզին, կ'անսպատուեմ մի խօսքով իմ բոլոր մերձաւորներին, որ չեն կարողացել ինչպէս պէտք է, կրթել ինձ և երկրորդ՝ կը վեսաի ընդհանուրը նրանով, որ ապագայում նրան չեմ կարող ոչ մի բանով օգնել, բացի վեսաելուց...

— Որքան ցաւալի է,—ասաց Գուրգէնը, որ մենք՝ տղամարդիքս ընդունակ ենք, շատ շուտով, խմնաբուել չարամիտ խորհուրդներով, կուրօրէն հետեւել չարատուի խորհրդին, բայց նոյնքան ուրախալի է, որ դուք—կանաչքող գիտէք հարցին խոհեմութեամբ, լըջօրէն, կշռելով և դատելով վերաբերուել, որոշ կերպով ջոկել ընդհանուրը—մասնաւորից: Օրիորդ նազենիկ, թոյլ առւր նկատել քեզ, որ դու էլ խմոր...

— Ների՞ր, եղբայր, ինձ այլ կերպ էին հասկացրել, իսկ այժմ շնորհակալ եմ ձեզպէս բարեսիրտ, անկեղծ ընկերներից, որ որոշ ցոյց առեցցիք, թէ ովք է ձշմարիտը:

— Բաւական է, այժմ մենք շնորհակալ կարող ենք լինել ձեր բոլորիցդ, որ դուք աւելի ընդունակ եք բարի գործ կատարելու, միահամուռ սիրով խմբուել բարի գործի շուրջը, քան մենք՝

տղամարդիքս, որոնք ընդունակ են աւելի շուտ դէպի չարը ձգաելու...

— Բաւական է, սիրելի Վարդան, մենք կատարեցինք մեր բարոյական սկարտքը, այժմ գնանք, գուցե կարողանանք համոզել և այն մեր խմբուած հայրենակիցներին, նաև անդ Գագիկին:

VIII

1889թ. օգոստոս ամսի մի օրն էր: Ա զինվի հինաւուրց, բարձրագագաթ գմբէթով եկեղեցին, կարծես թէ էղ օրն աւելի գոռող զիրք էր ստացել:

Նրա զանգակառան քաղցրաձէն զնդպնդոցը, միացած անհաշիւ հեռու տեղերից եկած ուխտաւորների հարայ—հրոցներով, սիրտ ու հոգի ցնծացնող երգերով՝ աւելի ու աւելի էր պայծառացնում պարզերես մարդկանց սիրտն ու հոգին, համեցէք անելով նրանց Աստուծոյ սրբաշէն առնելը, իսկ սկերեսներին հազարապատիկ տանջանքների մէջ զնելով, թուք ու մուր թափելով նրանց երեսին՝ «Հեռու կորէք, դուք, սև երեսներ, արժանի չէք իմ շէմը ոտք դնելու, այն շէմն, որ շինուած է արժանաւոր, ազգօգուտ, հայրենասէր մարդկանց ձեռքով...» Հէնց զնդպնդոցի էն թունդ սհաթին, հազարաւոր մահկանացուներ իրար դէս

ու դէն բոթելով՝ վռազում էին մէկը-միւսից
առաջ մտնել մարդկանց «մեղաց քաւարանը»,
մէկ էլ յանկարծ՝ հուեներից լսուեց. «ճամփին,
ճամփին, աղէքանցը ճամփիա բաց արէքու» Փո-
ղովուրդն շշկլուած՝ իսկոյն եղ քաշուեց, ճամ-
փիա տւեց և առաջ անցան երկու հոգի, մինը
անտառապետի հագուստով, միւսն՝ քննիչի:
Ամէնն էլ աչքները պլցրած նրանց էին մոտիկ
տալիս և իրար գլուխ ջարդելով՝ առաջ անց-
նում, թէ ինչ ա՝ իրենք էլ տեսնեն էղ նոր
նշանակուած անտառապետին ու քննիչին:

Դէմ ու դէմ եկաւ և մի բարձրաջան մարդ,
պատառուած շորերով, մաշուած տրեխներով, որը
ձեռաց շփոթուեց, եղ-եդ քաշուեց, թէ ինչ ա՝
իրեն չը տեսնեն, չը ճանաչեն, որ ինքն ամօ-
թից գետինը չը մտնի: Նա շատ աշխատեց, որ
թէզով նրանց աչքից հեռանայ, կորչի, համա-
անտառապետը ճանանչեց և դարձաւ դէպի իր
ընկերն՝ ասելով. «Վարդան, տես, տես, նա
Գագիկը չէ»:

—Թէւ ուղիղ տասն տարի է անց, Գուր-
դէն, որ նա բաժանուեց մեզանից, և թէւ
հաւանական է, որ շատ փոխուած լինի, սա-
կայն ինձ էլ այդպէս է երևում, որ Գագիկն է,
և կամ նրան շատ նման միննու Բայց ինչ, կա-
րելի է կանչել տալ:

Ծառան ասեց. «Հրամանք է, աղա, նա
չ, գիւղի Մուգուչ ամինի տղէն ա, ու անունն
էլ Դագիկ»:

Նա գնաց կանչելու, բայց եղ դարձաւ ասե-
լով, որ չը կարացաւ գտնել:

Հէնց էն նմուտին, որ «աղէքը» Աստծու
օրշնեալ տնում, ուղղած իրենց միաքը գէպի
երկնաւոր Հայրը՝ հաղար ու մէկ բարեմազթու-
թիւններ էին անում իրենց և իրենց ազգի
համար, զրմւատ, հէնց էղ բարի սհամին, մինը
երեսի վրա ընկած, եկեղեցու գաւթի մօտի
խոտադէզի տակ, վայ տալով՝ աղի արտասունք
էր թմափում ու ասում ինքն իրէն. «Ես հա-
մարեցի նրանց կեղսոտ, փչացած, անազնիւ,
մնասակար անդամ ազգի և հայրէնիքի, բայց
այժմ, այժմ... նրանք օգնում են իրենց հա-
մազիւղացիներին, բանում են իրենց հաշով
ուսումնարան, ուղարկում են աղքատներին
ուսում առնելու, մասնակցում են հազար և
մի տեսակ բարեգործական ձեռնարկութեանց,
պաշտպանում են և օգնում ընդհանուրին,
մասնաւորապէս և իրենց մերձաւոր ազգական-
ներին, իսկ ես, ես... հողն այս զլիսին...
երես անգամ չունեմ նրանց մօտենալու, չը կայ
անդամ մի մարդ, որ ինձ չնչաւոր համար
է... Զրկեցի ինքս ինձ, զրկեցի և ծնօղներին

իրենց վերջին կոպէկից և ինչու համար. որ
իմ գաղարկ գլխով չը կարողացաց զատել ընդ-
հանուր գործը մասնաւորից և զոհ գնացի մի
ցիմարի ցանկութեան, որ նա էլ, ով գիտէ, թէ
այսօր որտեղ է ընկած ինձ նման...


Նա երկար ու բարակ, վայ տալով իր
գլխին, ինքն իրէն խօսեց ու խօսեց, և մէկ էլ
լսեց. «աչքդ քոռաննա, բա չէիր լսած, թէ ոչ
էաբդա—նո ժարդ ո»:




ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Նոյն հեղինակի հետեւալ աշխատութիւնները.

1. Նարգիզ—Գիւլօ:
2. Աղնիւ Եւ Մարգառալան Կին:
3. Կոխու Խնոելիգէնցիացի Դէմ:



ՆԱԵԻ ՊԱՏՐԱՍ Է



2613

